ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Վեդի, Թումանյան փ., շ. 6, Հեռ. +(374)23423332, vedimeria@rambler.ru

«Ջի էՄ Բի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն

պարոն Լ. Լևոնյանին,

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Լևոնյան:

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանը «Ջի էՄ Բի Գրուպ» ՍՊԸ-ի հետ 2022թ. նոյեմբերի 7-ին կնքել է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայության մատուցման գնման N ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/31/1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1. կետով նախատեսվել է իրականացնել **Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայության** մատուցում կապված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ Վեդի քաղաքային բնակավայրի Արարատյան փողոցի մայթերի հիմնանորոգման - սալիկապատման /կառուցման/ աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու: Առկա ֆինանսական միջոցների 50%-ի մասով ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ և տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինում բանկային երաշխիքներով: Ձեր կողմից սահմանված ժամկետում առկա գումարի մասով ներկայացվել է համապատասխան որակավորման և պայմանագրի ապահովումները:

Հիմք ընդունելով, որ Վեդի համայնքի Արարատյան փողոցը համարվում է հանրապետական նշանակության ճանապարհ և ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածով և 538–րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով , ՀՀ Քաղաքաշինության մասին օրենքի 19-րդ հոդվածով, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 26.06.2009թ. թիվ 792-Ն որոշման և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով Վեդու համայնքապետարանը միակողմանի լուծում է սույն պայմանագիրը:

Կատարողի կողմից բանկային երաշխիքի տեսքով որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կվերադարձվեն կատարողին:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կհրապարակվի www.procurement.am կայքի համապատասխան բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Վեդի համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյան